ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները,

ղեկավարվելով 1991 թվականի դեկտեմբերի 8-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին Համաձայնագրի եւ 1991 թվականի դեկտեմբերի 21-ի Համաձայնագրին կից Արձանագրության նպատակներով եւ սկզբունքներով,

ուշադրության առնելով Համագործակցության պետությունների ցանկությունը՝ Համագործակցության համակարգող ընդհանուր ինստիտուտների միջոցով իրականացնելու համատեղ գործունեություն,

անհրաժեշտ համարելով հիմնել հիշատակված Համաձայնագրի դրույթները հետեւողականորեն կյանքի կոչելու համար համապատասխան միջպետական եւ միջկառավարական ինստիտուտներ՝ ընդունակ ապահովելու համագործակցության արդյունավետ համակարգումը եւ աջակցելու փոխշահավետ եւ իրավահավասար զարգացմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Պետությունների ղեկավարների խորհուրդը հանդիսանում է բարձրագույն մարմին, որում պետությունների ղեկավարների մակարդակով ներկայացված են Համագործակցության բոլոր մասնակից պետությունները՝ նրանց ընդհանուր շահերի ոլորտում Համագործակցության պետությունների գործունեության համակարգման հետ կապված սկզբունքային հարցերը քննարկելու համար:

Խորհուրդը լիազորված է քննարկել Անկախ Պետությունների Համագործակցության ստեղծման մասին Համաձայնագրով եւ, ի զարգացումն նշված Համաձայնագրի, այլ փաստաթղթերով նախատեսված հարցեր՝ ներառյալ ԽՍՀ Միության գոյության դադարեցման եւ միութենական կառույցների լուծարման կապակցությամբ ծագած իրավահաջորդության հիմնախնդիրները:

Պետությունների ղեկավարների խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների խորհրդի գործունեությունն իրականացվում է Համաձայնագրի մասնակից պետությունների պետական ինքնիշխանության եւ ինքնիշխան հավասարության, ինքնորոշման անքակտելի իրավունքի, իրավահավասարության եւ ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների փոխադարձաբար ճանաչման եւ հարգման, ուժ գործադրելուց եւ ուժով սպառնալուց հրաժարվելու, տարածքային ամբողջականության եւ գոյություն ունեցող սահմանների անխախտելիության, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների եւ ազատությունների հարգման, ներառյալ ազգային փոքրամասնությունների իրավունքները, պարտավորությունների եւ միջազգային իրավունքի այլ հանրաճանաչ նորմերի եւ սկզբունքների բարեխիղճ կատարման հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 2

Պետությունների ղեկավարների խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների խորհրդի գործունեությունը կարգավորվում է Անկախ Պետությունների Համագործակցություն ստեղծելու մասին Համաձայնագրով, սույն Համաձայնագրով եւ ի զարգացումն դրանց ընդունված համաձայնագրերով, ինչպես նաեւ այդ ինստիտուտների ընթացակարգի կանոններով:

Յուրաքանչյուր պետություն խորհրդում ունի մեկ ձայն: Խորհրդի որոշումներն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ՝ փոխզիջմամբ:

Խորհուրդների պաշտոնական լեզուներն են Համագործակցության պետությունների պետական լեզուները:

Աշխատանքային լեզուն ռուսերենն է:

ՀՈԴՎԱԾ 3

Պետությունների ղեկավարների խորհուրդը եւ Կառավարությունների ղեկավարների խորհուրդը քննարկում եւ, անհրաժեշտության դեպքում, ընդունում են ներքին եւ արտաքին առավել կարեւոր հարցերով որոշումներ:
Ցանկացած պետություն կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր շահագրգիռ չլինելու մասին:

ՀՈԴՎԱԾ 4

Համագործակցության պետությունների ղեկավարների խորհուրդը նիստերի է հավաքվում ոչ պակաս, քան տարին երկու անգամ: Յուրաքանչյուր հաջորդ նիստի անցկացման ժամկետների եւ նախնական օրակարգի որոշումն ընդունվում է Խորհրդի հերթական նիստում, եթե Խորհրդում չեն պայմանավորվում այդ մասին:
Պետությունների ղեկավարների խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են Համագործակցության պետությունների ղեկավարների մեծամասնության նախաձեռնությամբ:
Պետության ղեկավարները խորհրդի նիստում նախագահում են Համագործակցության պետությունների անվանումների՝ ըստ ռուսերենի այբբենական կարգի:
Պետությունների ղեկավարների խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են Մինսկում: Խորհրդի նիստը կարող է անցկացվել Համագործակցության պետություններից որեւէ մեկում՝ մասնակիցների համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 5

Համագործակցության Կառավարությունների ղեկավարների խորհուրդը նիստերի է հավաքվում ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: Յուրաքանչյուր հաջորդ նիստի անցկացման ժամկետների եւ նախնական օրակարգի որոշումն ընդունվում է Խորհրդի հերթական նիստում, եթե Խորհուրդը այլ բանի մասին չի պայմանավորվում:
Կառավարությունների ղեկավարների խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են Համագործակցության պետությունների կառավարությունների ղեկավարների մեծամասնության նախաձեռնությամբ:
Կառավարության ղեկավարները խորհրդի նիստերում նախագահում են Համագործակցության պետությունների անվանումների՝ ըստ ռուսերենի այբբենական կարգի:
Կառավարության ղեկավարների խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են Մինսկում:
Խորհրդի նիստը, Կառավարությունների ղեկավարների համաձայնությամբ, կարող է անցկացվել Համագործակցության պետություններից որեւէ մեկում:

ՀՈԴՎԱԾ 6

Պետությունների ղեկավարների խորհուրդը եւ Համագործակցության պետությունների կառավարությունների ղեկավարների խորհուրդը կարող են անցկացնել համատեղ նիստեր:

ՀՈԴՎԱԾ 7

Պետությունների ղեկավարների խորհրդի եւ Համագործակցության պետությունների կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշմամբ կարող են ստեղծվել աշխատանքային եւ օժանդակ մարմիններ ինչպես մշտական, այնպես էլ ժամանակավոր հիմքով:
Նրանք ձեւավորվում են մասնակից պետությունների լիազոր ներկայացուցիչներից: Նրանց նիստերին մասնակցելու համար կարող են ներգրավվել փորձագետներ եւ խորհրդատուներ:

Կատարված է Մինսկ քաղաքում 1991 թվականի դեկտեմբերի 30-ին, մեկ օրինակով, ադրբեջաներեն, հայերեն, բելառուսերեն, ղազախերեն, ղրղզերեն, մոլդովերեն, ռուսերեն, տաջիկերեն, թուրքմեներեն, ուզբեկերեն եւ ուկրաիներեն: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը դրա հավաստված պատճենները կուղարկի սույն Համաձայնագրի մասնակից պետություններին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1991 թվականի դեկտեմբերի 30-ից: